ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
13.06.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 14 անդամները:

Բացակայում է Տարոն Եփրեմյանը:

Նիստը վարում է համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը:

Համայնքի ղեկավարի տեղակալ ***Վ. Չիլինգարյանի*** հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Շ.Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ.Բալբաբյանը և Ֆինանսատնտ. և գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ Ա.Ավդալյանը:***

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2019 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:
2. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և կառուցապատման իրավունքով, մրցութային կարգով հատկացնելու թույլտվություն տալու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ ***Նորիկ Վարդանյանը և Հակոբ Գրիգորյանը*** առաջարկեցին օրակարգից հանել 2-րդ հարցը՝ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և կառուցապատման իրավունքով մրցութային կարգով հաստատելու թույլտվություն տալու մասին:
Քվեարկության արդյունքում՝ 12 դեմ և 2 կողմ ձայներով, առաջարկը չընդունվեց

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե այլ առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ;

Կողմ -12 **դեմ - 2** **ձեռնպահ -0**

Վարդանյան Նորիկ
Գրիգորյան Հակոբ

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

***1.* Չարենցավան համայնքի 2019 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:**

/Զեկ.Վ Չիլինգարյան/

Հաշվի առնելով, որ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Չարենցավան համայնքի կողմից ներկայացված «Չարենցավան համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից, ղեկավարվելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի 3-րդ հոդվածի գ) կետի 4-րդ պարբերության դրույթներով՝ ***առաջարկում եմ.*** հաստատել Չարենցավան համայնքի կողմից 2019 թվականին իրականացվելիք բնապահպանական ծրագրիը՝ համաձայն հավելվածի;

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 14 **դեմ - 0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. ***Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և կառուցապատման իրավունքով մրցութային կարգով հատկացնելու թույլտվություն տալու մասին:***

/Զեկ. Բ.Բալբաբյան /

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ,67-րդ և 76-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ,*** թույլատրել համայնքի սեփականության ներքո գտնվող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և կառուցապատման իրավունքով մրցութային կարգով հատկացնելու՝ համաձայն հավելվածի

Հ/Հ	ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ	ՄԱԿԵՐԵՍԸ Հա /ծածկագիր/	ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԸ	ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ
1	Չարենցավան համայնք ք. Չարենցավան Շահումյան փողոց 216 հողամաս	0,06 հա 07-007-0054-363	Բնակավայրերի բնակելի կառուցապատման	Սեփականություն	1764000 ՀՀ դրամ
2	Չարենցավան համայնք գյուղ Արզական Անտառային փողոց4-րդ փակուղի 3/1 հողամաս	0,08676 հա 07-015-0232-0009	Հատուկ պահպանվող տարածքների համար նախատեսված	Սեփականություն	2550744 ՀՀ դրամ
3	Չարենցավան համայնք գյուղ Ալափարս հողամաս	1,19204 հա 07-008-0236-0032	Գյուղատնտեսական նշանակության արոտավայր	Սեփականություն	100000 ՀՀ դրամ
4	Չարենցավան համայնք գյուղ Ալափարս հողամաս	0,50778 հա 07-008-0201-0172	Գյուղատնտեսական Նշանակության վարելահող	Վարձակալություն	10000 ՀՀ դրամ
5	Չարենցավան համայնք գյուղ Ալափարս հողամաս	0,50066հա 07-008-0201-0197	Գյուղատնտեսական Նշանակության վարելահող	Վարձակալություն	10000 ՀՀ դրամ
6	Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 3-րդ փակուղի թիվ 71	0,0300 հա հողամաս 07-019-045-048 108,23քմ շինություն	էներգետիկայի, կապի,տրանսպորտի և կոմունալ ենթակոմունալ օբյեկտներ	Վարձակալություն	Հողամասի տարեկան վարձավճար 10000 դրամ, շինության տարեկան վարձավճար 15000 դրամ

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 **դեմ - 2** **ձեռնպահ-1**

Վարդանյան Նորիկ

Գրիգորյան Հակոբ

Բաբայան Նարեկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. ***Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին***:

/Զեկ. Ա.Ավդալյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի վարչական ղեկավար Ա. Սարիբեկյանի, Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի վարչական ղեկավար Ա. Բաղդասարյանի 2018 թվականի հունիսի 06-ի, Չարենցավան համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանի և համայնքապետարանի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետի ժ/պ Պ. Գաբրելյանի 2018 թվականի հունիսի 08-ի զեկուցագրերը՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 89-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝

ա. **7422** «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «52673.7» թիվը փոխարինել «54963.7» թվով

2) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0111 «Չարենցավանի համայնքապետարանի պահպանման ծախսեր» -ի 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվի «300.0» թիվը փոխարինել «1590.0» թվով,

բ. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)»-ի 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվին հատկացնել 1000.0 հազ.դրամ,

գ. 0133 ՔԿԱԳ պատվիրակված լիազորությունների պահպանման ծախսերի՝

գա. 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» սինթետիկ հաշվի «4857.1» թիվը փոխարինել «4821.1» թվով,

գբ. 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվին հատկացնել 36.0 հազ.դրամ:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-13 **դեմ-1** **ձեռնպահ-0**

Վարդանյան Նորիկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

4.***Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Աբգարյանի 2018 թվականի հունիսի 08-ի թիվ 66 գրությունը, ***առաջարկում եմ***Չարենցավան համայնքի **«Մշակույթ»ՀՈԱԿ-ի** ստորաբաժանման ղեկավարների աշխատավարձը սահմանել 110000 դրամ:

Համայնքի ավագանու անդամ ***Նորիկ Վարդանյանը*** առաջարկեց **«Մշակույթ» ՀՈԱԿ-ի** ստորաբաժանման ղեկավարների աշխատավարձը սահմանել 115000 դրամ:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան **«Մշակույթ» ՀՈԱԿ-ի** ստորաբաժանման ղեկավարների աշխատավարձը 115000 դրամ սահմանելու վերաբերյալ, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-14 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ
Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Գրիգորյան Հակոբ
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Պողոսյան Մնացական
Սահակյան Երեմ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Սարգիս
Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Վ.ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ**